ՎԱՀԱՆ ՌՇՏՈՒՆԻ

1970 թ. փետրվարին ընդհատվեց սովետահայ ականավոր պատմաբան, պրոֆեսոր Վահան Ռշտունու կյանքի թելը։ Տասնամյակներ շարունակ նա անխոնջ տքնությամբ իր անձը նվիրաբերեց հայրենի պատմագիտության զարգացմանը՝ ինչպես ստեղծագործական անդուլ աշխատանքով, այնպես էլ մանկավարժական երկարամյա անձնվեր գործունեությամբ։

Վահան Հարությունի Ռշտունին ծնվել է 1894 թ., Վաղարշապատում, արհեստավորի ընտանիքում։ 1905—1915 թթ. ուսանել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որի լրիվ դասընթացն ավարտելուց հետո հայաբնակ տարբեր վայրերում զբաղվել է ուսուցչությամբ։ Մեկ տարի Պարսկաստանի Թավրիզ քաղաքի հայկական վարժարանում դասավանդելուց հետո նա անցնում է Ախալցխա, Սուխումի, ապա Թբիլիսի։ 1919—1924 թվականներին Վ. Հ. Ռշտունին ուսանում է Թբիլիսիի Վ. Ի. Լենինի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետում և միաժամանակ ուսուցանում տեղի հայկական դպրոցներում։ 1924 թ. վերադառնալով Երևան նա աշխատանքի է անցնում նորաբաց կուսակցական դպրոցում և միաժամանակ «Սոցիալիզմի պատմություն» ավանդում Երևանի պետական համալսարանում։ 1930/31 ուսումնական տարում հիմնադրվում է Երևանի պետական համալսարանի ՍՍՀՄ ժողովուրդների պատմության ամբիոնը, որի ղեկավարն էր մինչև իր կյանքի վերջը Վ. Հ. Ռշտունին։ 1941 թ. նա պաշտպանել է դոկտորական դիսերտացիա։

Համալսարանի պատմության ֆակուլտետի դեկանի և ուսումնական մասի վարիչի պաշտոններում Վ. Ռշտունին ի հայտ է բերել դիտական և մանկավարժական աշխատանքի բանիմաց կազմակերպչի ընդունակություններ՝ հոգատարությամբ աճեցնելով բազմաթիվ մանկավարժական և դիտական կադրեր։

Պրոֆ. Ռշտունին սերտորեն կապված էր Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հետ, որտեղ 1938—1954 թթ. համատեղությամբ աշխատել է իբրև ավագ գիտական աշխատող։ Սովետահայ պատմագիտությանը մատուցած ծառայությունների համար 1957 թ. պրոֆ. Ռշտունին ընտրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ։ Նա մինչև վերջ էլ սերտ կապեր է պահպանել պատմության ինստիտուտի հետ, «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի V և VI հատորների հեղինակներից մեկն է։

Մեծ են պրոֆ. Ռշտունու ծառայությունները սովետահայ պատմագիտության բնագավառում։ Նա պատմաբանի իր ողջ կարողությունը և հմտությունը նվիրաբերեց հայ ժողովրդի նոր շրջանի պատմության բազմաթիվ կարևոր և կնճռոտ պրոբլեմների լուսաբանությանը։

Սկսած 1940 թ. լույս տեսան պրոֆ. Ռշտունու գիտական հոդվածները՝ նվիրված հայ գյուղացիության և XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական տարընթաց հոսանքների պատմությանը, որոնք հետագայում ամփոփվեցին նրա մեծածավալ «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում 1870 թվականին» (1947, ռուսերեն), «Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության» (Ա. մաս, 1960, բ. մաս, 1968), «Հայ հասարակական հոսանքների պատմությունից» (1956) մենագրություններում։ Նա է հրատարակել նաև «Գյուղացիական շարժումը Հայաստանում XIX դարում» (1948, ռուսերեն) և «Ցարիզմի ագրարային քաղաքականությունը և գյուղացիական շարժումը Հայաստանում XX դա-

րի սկզբին (1951, ռուսերեն) արխիվային վավերագրերի ժողովածուները, որոնք լույս են սփռում հայ գյուղացիության վիճակի և նրա մղած դասակարգային պայքարի պատմության կարևորագույն հարցերի վրա։

Սովետահայ պատմագիտության մեջ պրոֆ. Վ. Ռշտունին առաջինը խոր և հանգամանորեն վերլուծեց ցարական կառավարության վարած ագրարային քաղաքականությունը, ցույց տվեց հասարակական հակադիր և հակամերժ հոսանքների առաջացումը արևելահայ իրականության մեջ՝ կապված կապիտալիստական հարաբերությունների, ճիշտ է, դանդաղ, բայց անընդմեջ զարգացման հետ։ Պրոֆ. Ռշտունին մանրամասնաբար քննարկել է նաև XIX դարի ընթացքում Արևելյան Հայաստանում ծավալված գյուղացիական ելույթները և դրանց դրտապատճառները։

Այդ կարևոր հարցերի լուսաբանությանն է նվիրված պրոֆ. Վ. Ռշտունու պատմագիտական ժառանգությունը և, իբրև այդպիսին, այն լուրջ ներդրում է սովետահայ պատմագիտության մեջ։

Երկարատև մանկավարժական գործունեության ընթացքում նրա դաստիարակած, խնամքով և հոգատարությամբ աճեցրած բազմաթիվ կադրերն այժմ աշխատում են հասարակական գիտությունների բնագավառում և իրենց լուման մտցնում սովետահայ գիտության ոսկե գանձարանը։ Նրանք երախտապարտ են իրենց հմայիչ և բարի ուսուցչին, որն իր խորհուրդներով, ջերմ վերաբերմունքով աշխատանքի և ստեղծագործության էր մղում։

Գիտական և մանկավարժական բեղմնավոր գործունեությունը չէին խանգարում պատկառելի գիտնականին զբաղվելու հասարակական-քաղաքական գործուն աշխատանքով. երկիցս նա ընտրվել է Երևանի քաղաքային սովետի դեպուտատ, բազմաթիվ զեկուցումներով հանդես եկել հանրապետության աշխատավորության առջև։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը բարձր են գնահատել Վ. Հ. Ռշտունու ծառայությունները։ Նա 1956 թ. պարգևատրվել է Լենինի շքանշանով, ինչպես նաև արժանացել է կառավարական այլ պարգևների։ 1946 թ. նրան շնորհվել էր գիտության վաստակավոր գործչի կոչում։

Սովետահայ պատմաբանները իրենց սրտում միշտ վառ կպահեն սքանչելի մարդու և տաղանդավոր գիտնականի հիշատակը, որը ողջ գիտակցական կյանքը նվիրեց իր ժողովրդին, հայրենի պատմագիտությանը։